

դուժիւններ, Այս պատճառով օրիորդական ուսումնա-
րանները առանձնապէս պէտք է խուսափեն իրանց հա-
ւատացած երեխաներին լողնեցնելուց, մալրերը իրանց
դուստրներին քնքշութեամբ պիտի պահեն և հրահան-
դեն. ոլթերը լարող թէ գիտնական և թէ ուրիշ այն-
պիսի ասպարէզի համար պատրաստելիս, որոնց դուները
բաց են և կանանց համար, պէտք է ընտրել միայն
այն տեսակ անոթները, որոնց մտաւոր ընդունակութիւնը
և մարմնի առողջ կազմուածքը երաշխաւորում են դո-
րա համար:

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԸՄՏ Պ. Մ. ԵԿՄԱԼԵՍՆՑԻ

Կովկասի լրագրաց, որպէս և Ձեր ընտիր հանդիսի՝
ճշմարտի մէջ շատ կարեւոր խնդիր մը յառաջ եկաւ, որ
կվերաբերի պ. Մ. Եկմալեանցին ներդաշնակած Ս. Պատա-
րագի արարողութեան տպագրութեան: Այս խնդիրը հակա-
ռակ կարծիք յառաջ բերաւ՝ արդեօք ինչպիսի ձայնանիշ-
ներով պէտք է տպագրուի արդի՝ Հայկական, թէ՞ Եւ-
րոպական:

Այլ անգամին թողլով աս հարցերուն վերաբերեալ
բացատրութիւնները, գրութեամբս կուզեմ շեշտել խնդիր
մը, որ, ըստ մեր կարծեաց, նախապատիւ է, ընտրութիւն
և նուազ տպագրելի Ս. Պատարագի արարողութեան:

Որչափ գիտենք, Հայոց Ս. Պատարագի երգեցմունքը
տպագրուած է երիցս միայն. երկուքը՝ ի Ս. Եջմիածին ար-
դի հայկական և մին՝ ի Վենետիկ՝ Եւրոպական ձայնանիշե-
րով: Ասոնց բովանդակութեան գնահատութիւնը մէկդի թո-
ղուք. բայց եթէ քովէ քով դնենք, բաւականաչափ զգալի
զանազանութիւն մը կ'ընտրուի, զի երկուքն ևս որիշ եր-
գեցմունք պարունակելէ զատ, չեն յարմարիր նոյնպէս այլ
և այլ տեղեաց նուագներուն. աս մեր անձնական փորձէն
ևս գիտենք: Քանի մը տարի առաջ պաղոյտ մը գործեցինք
Կ. Պոլսէն ի Կովկաս և անտի ի Պարսկաստան և ամեն տեղ

աս հարցը ծագեցաւ մեր մօքին մէջ՝ ինչո՞ւ հայերս զուրկ ենք Ս. Պատարագի նմանօրինակ երգեցողութենէն. շարահաններուն գալով քիչ շատ համուղեւեցանք, որ գոնէ ասոնց էութիւնը պահուած է. և եթէ տեղ տեղ փոփոխութեան է ենթարկուած, բուն պատճառը պէտք է փնտռենք արտաքին, քաղաքական և բարոյական պայմաններու խճուճ ցանցին մէջ:

Այսպիսի մեծ գործ, որպիսին է, արդի հարցերուն մէջ պ. Մ. Եկմալեանցի ներդաշնակած Ս. Պատարագի արարողութեան տպագրութիւնը, խիստ և մանրազնին բնունութեան ենթարկելու է, աչքի առջև ունելով երեք կէտ. հարազատութիւն, երաժշտականութիւն և անհատականութիւն: Ասոնք պարզեւէն ետքը ինքն ըստ ինքեան բացատրած կլինինք վերը յիշած գլխաւոր խնդիրը՝ ընտրութիւն և նուազ տպագրելի Ս. Պատարագի արարողութեան:

Պէտք է ձայնի առնել գլխաւոր քաղաքներու և ահա նաւոր վանքերու և մենաստաններու Հայոց եկեղեցական երգեցմունքը, բայց մեծ զգուշութեամբ, ճշտութեամբ և հարազատութեամբ. զի, որպէս վերը յիշեցինք, զանազան տեղեր այլակերպ կերգուին այդ գանձերը՝ մերհոգեւոր զգացմանց անկեղծ թարգմանները: Եւ ո՞րչափ հարազատ ձայնագրուին, նոյնչափ ևս կփայլէ ազգի բարոյական զգացմանց արժանիքը վասն զի ո՛չ ապաքէն բարոյականութեան զարկ տուող պայմաններէն մին է ժողովրդի մը և՛ նուազներու արապայտութեան ազնուութիւնը:

Այսպիսի խնամօք ձայնագրեալ նուագներէն համեմատաբար ծաղկաբաղ անելով պէտք է ընտրել գեղեցկագոյն, ազնիւ և երաժշտականութեան աւիւն պարունակողները, ապա վեհաշուք վսեմ փունջ մը կապելով խմբագրել:

Բայց մեր բոլոր ջանքերն ապարդիւն կանցնի, եթէ յուսախաբուինք անհատական ընդունակութեամբ: Անհատականութիւնն անհրաժեշտ է, բայց իբրեւ ղեկավարող և ոչ հեղինակող, զի հեղինակութեան մեծազօր գաւազանը, ամենայն իրաւամբ, կպատկանի ոչ անհատին կամ եզակի տաղանդին, այլ այդպիսիներու կաճառին և ակումբին: Այստեղ լուծուեցաւ հանգոյցը. մասնաւորներ մեր գրիչն ու խօսքը:

Կըսեն պ. Մ. Եկմալեանց Կովկասի հմուտ երաժշտագէտներէն մին է և ազատ յորջորջեալ գեղարուեստագէտ. բայց մենք գիտենք, որ ոչ հմուտ երաժշտագիտութիւնը և ոչ իսկ ազատ գեղարուեստագիտութեան մրցադրերը իրաւունք կուտան որ և է անձ մը ընդունել իբրև հեղինակութիւն ընդհանուրին վերապահեալ սեպհականութեանց նկատմամբ. նա ոչ երբէք կարող է հեղինակաւոր հանդիսանալ հասարակական գործին մէջ, այլ գործունէութեան մէջ. և ընդհանուրին պատկանող խնդիրն ևս ընդհանուրը պէտք է վճռէ և ոչ անհատի մը, դիցուք, եղակի ընդունակութիւնը, Հայկական երաժշտութեան հմուտ անձանց խումբ մը պէտք է, որին յանձնելու է այդ գլխաւոր խնդիրը. իսկ եթէ չկան և կպակասին այդպիսիք, հոգ չէ, կարելի է բանի մը ժամանակ ևս համբերել, կորուստ չենք ունենար, վասն զի չպէտք է ապաւինել և յետու անհատի ընդունակութեան վերայ, որ կարող է օգուտ բաղել այս տեսակ զիջումէն և իւր բմահաճոյքները մուծել: Պէտք է գործը ամեն կողմէն դիտել: Առ այժմ մեր զգացմանց սնունդ կարող է առաջ միաձայն երգեցմունքն ևս կանոնաւոր երաժշտական հիմունքներով:

Արմոգ

Լոնդոն 17/29 ապրիլ:

ԲԵՏԵՏԳԵՆԻ ԳԻՒՏԸ

Երբ, ըստ երեւութին, լուսանկարչութիւնը հասնում էր սյն կէտին, որ պիտի կարողանար արտասանել իւր վերջին խօսքը, ամբողջ Եւրոպայում կայծակի արագութեամբ տարածուեցաւ Վիւրցբիւրգի համալսարանի ուսուցչապետ Բեռնարդինի նոր գիտի լուրը: Սոյն համառօտ յօդուածով կաշխատենք ծանօթացնել «Լուսնայի» ընթերցողներին այդ խնդրի էութեան հետ, քաղուածաբար առնելով „Mір-Божій“ ամսագրի տարոյս մարտի համարում ապուած այդ խնդրին վերաբերեալ մի ընդարձակ յօդուածից:

Եթէ վերցնենք Կրուկսի խողովակը և նորա մէջ Բում-